ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կաքավաձոր բնակավայր 21.02.2025 թ.

2025 թվականի փետրվարի 21-ին, ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Դարի քար» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Թալին համայնքի ներկայացուցիչ Գագիկ Միրզախանյանը, այնուհետև խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Ընկերության ներկայացուցիչ Գևորգ Հովսեփյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, նշեց, որ հանքավայրի պաշարները հաստատվել են տարածքում իրականացված երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում, խոսեց բնապահպանական ազդեցությունների և դրանք մեղմացնող միջոցառումների մասին: Հովսեփյանը նշեց, որ ընկերությունը նախատեսել է սոցիալական աջակցություն ցուցաբերել համայնքին, անհրաժեշտության դեպքում տեխնիկա տրամադրել

բնակիչներին, իսկ գործունեության արդյունքում կստեղծվի մոտ 19 աշխատատեղ և աշխատանքներին հիմնականում կներգրավվեն համայնքի բնակիչները:

Հարությունյանի կողմից հնչեցին հարցեր հանքավայրի ռեկուլտիվացիոն աշխատանքների համար նախատեսված գումարի չափի վերաբերյալ, որին ի պատասխան նշվեց, որ ռեկուլտիվացիան իրականացվելու է աստիճանաբար՝ շահագործմանը զուգահեռ: Ծավալվեց քննարկում և հարցուպատասխանի միջոցով բոլոր հարցերը պարզաբանվեցին:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչների կողմից հարցեր չհնչեցին, բոլորը միաձայն նշեցին, որ դեմ չեն հանքավայրի շահագործմանը և, որ իրենք ուրախ կլինեն աշխատել հանքավայրում:

Վարչական ղեկավար Արգիշտի Մխիթարյանը նշեց, որ հանքավայրի շահագործումը կարևոր նշանակություն ունի համայնքի համար, ինչի հետևանքով կստեղծվեն աշխատատեղեր և բնակիչները չեն արտագաղթի համայնքից:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, Կաքավաձոր բնակավայրի վարչական ղեկավարը, Թալին համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները և «Դարի քար» ընկերության տնօրենը:

Բնակիչները հավանություն տվեցին նախատեսվող գործունեությանը:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Վարող և քննարկումների պատասխանատու՝ **Ք. Հարությունյան**

«Դարի քար» ՍՊԸ-ի տնօրեն՝ **Մ. Մխիթարյան**